

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ԱՆՏԻՊ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3 (5Հ)
Ս 411

Տեքստը պատրաստեց, ծանոթագրեց և խմբագրեց
Սևակ Ղազարյանը

Սևակ Պարույր
Ս 411 Անտիպ ուսումնասիրություններ / Պարույր Սևակ. -
Եր.: Արմավ, 2016. - 400 էջ:

Ընթերցողին առաջին անգամ ներկայացվող գիտական այս երկու աշխատությունները կարևորագույն արժեք ունեն ինչպես միջնադարյան հայ գրականությանն առնչվող տարբեր հիմնախնդիրների լուսաբանման տեսակետից, այնպես էլ Պ. Սևակի գիտական ժառանգության ամբողջացման համար:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3 (5Հ)

ISBN 978 - 9939 - 863 - 41 - 2

© Ղազարյան Արմեն, 2016
© Ղազարյան Սևակ, 2016
© Արմավ, 2016

Գիրքը հրատարակվել է
«Հայաստան հիմնադրամ ԱՄՆ»-ի աջակցությամբ



ՆԱԽԱԲԱՆ

Պարույր Սևակը հանրությանն առավել հայտնի է որպես բանաստեղծ: Բայց դեռևս ուսանողական տարիներից սկսած, բանաստեղծական առաջին քայլերին զուգընթաց Սևակը կատարում է նաև իր բանասիրական-գրականագիտական անդրանիկ փորձերը: Հետագայում բանաստեղծի հետ մեկտեղ հասունանում ու կայանում է նաև **Պ. Սևակ բանասեր-գրականագետ-գիտնականը**: Ասվածի ապացույցն են տարբեր տարիներին գրված բազմաթիվ հոդվածները և «Սայաթ-Նովա» մեծարժեք ուսումնասիրությունը:

Ներկա գիրքը գալիս է լրացնելու Պ. Սևակի **գիտական** ժառանգությունը:

«Սայաթ-Նովա» աշխատությունը առաձնանում էր ոչ միայն ուշագրավ բանասիրական բացահայտումներով և գրականագիտական խոր վերլուծություններով, այլ նաև մատուցվող նյութի մատչելիությամբ, հասանելիությամբ: Այդ պատճառով է, որ «Սայաթ-Նովան»-ն ընթերցվում է **հեշտությամբ**. կարծես ոչ թե գիտական լուրջ ու ծանրակշիռ ուսումնասիրություն ես կարդում, այլ մի հետաքրքրաշարժ վեպ:

Նույնը կարելի է ասել և այս գրքում ներկայացված անտիպ երկերի մասին, թեև «**Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում**» աշխատությունը Սևակը գրել է երիտասարդ հասակում (ասպիրանտական տարիներին), իսկ «**Սայաթ-Նովան և հայ միջնադարը**»՝ կյանքի վերջին ամիսներին:

Ցավոք, տարբեր պատճառներով այս երկու գործերն անավարտ են մնացել: Բայց անգամ անավարտ՝ երկուսն էլ կարևորագույն արժեք ունեն ինչպես հեղինակի ժառանգության ուսումնասիրման, այնպես էլ նրանցում բարձրացվող գիտական այլևայլ հարցերի տեսակետներից:

Համառոտ ներկայացնենք, թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում են ստեղծվել այս աշխատությունները¹:

«Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» ուսումնասիրությունը ասպիրանտ **Պարույր Ղազարյանի** թեկնածուական ատենախոսությունն էր, բայց ստալինյան ռեժիմի պարտադրանքով նա գործը կիսատ է թողնում:

Պ. Սևակի արխիվում պահպանվել է «Կարծեցյալ Շապուհ...»-ի մեկ օրինակը միայն: Այն **ձեռագիր** է, շարադրվել A4 ֆորմատի թղթերի վրա, էջակալված է հեղինակի կողմից և կազմում է **110 էջ**:

Ցավոք, հնարավոր չէ որոշել «Կարծեցյալ Շապուհ...»-ի գրման ստույգ ժամանակը. ձեռագրի էջերից ոչ մեկում չկա որևէ թվագրություն, որ թույլ կտար պարզություն մտցնել այս հարցում: Հայտնի է, որ Սևակի ասպիրանտական տարիները ընդգրկում են **1945-1948** թվականները: Պահպանվել են ատենախոսության հետ առնչվող մի քանի աշխատանքային տետրեր, որոնցից մեկը թվագրված է **«1947թ., հունիս»**: Այդ տետրը զանազան նշումների ու գրառումների հետ մեկտեղ պարունակում է նաև գրվելիք ատենախոսության «պլան»-ծրագիրը՝ համապատասխան գլուխներով: Ըստ այդմ, ամենայն հավանականությամբ, «Կարծեցյալ Շապուհ...»-ի շարադրանքը 1947 թվականի հունիս ամսին առնվազն դեռ շարունակվում էր: Բայց սա միայն ենթադրություն է, որ առայժմ փաստական այլ ապացույցներով չի հաստատվում:

«Կարծեցյալ Շապուհ...»-ի առկա օրինակը **«աշխատանքային»**, **«սևագրային»** բնույթի է: Մեր այս պնդումը հաստատվում է ոչ միայն աշխատության կիսատ լինելով, այլև նրա-

1 Առավել մանրամասն տե՛ս Ս. Ղազարյան, Պարույր Սևակի անտիպ ժառանգությունը. գեղարվեստական արձակ և գրականագիտություն, «Արեգ» հրատ., Երևան, 2014:

նում առկա մի քանի ոչ շատ էական անձշտություններով՝ կապված պատմական ինչ-ինչ թվականների անհամապատասխանության, երբեմն հանդիպող կրճատ գրված բառերի, քերականական անհարթությունների հետ, որ անկասկած խոսում է տեքստի վերջնական մշակման բացակայության մասին: Այդ տեսակի բոլոր թերությունները շտկվել են՝ հիմնականում առանց ծանոթագրվելու:

«Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատությունը¹ Պ. Սևակը սկսում է գրել **1970 թ-ի հոկտեմբերի 30-ին**: Ընդամենը հինգ ամսում (մեծ մասամբ իր հայրենի գյուղ Չանախչիում) Սևակը գրում է 204 ձեռագիր էջեր: Աշխատությունն ընդհատվում է **1971 թ-ի ապրիլի 2-ին**: Չուզահեռաբար ձեռագիր շարադրված թերթերը Սևակը հանձնում է իր մտերիմ բարեկամ Գրացիա Բաղդասարյանին՝ մեքենագրելու:

Այդպիսով, Սևակի արխիվում «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատության **երկու** օրինակներ են պահպանվում: Մեկը՝ **204 էջանոց ձեռագիրը**, մյուսը՝ **201 էջանոց մեքենագիրը**:

Սրանք համարյա ամբողջովին նույնական են, բովանդակային որևէ տարբերություն չկա նրանց միջև: Բայց, չնայած ընդունված կարգին, այս երկուսից վերջնականը պետք է համարել ոչ թե մեքենագիրը, այլ **ձեռագիրը**: Բանն այն է, որ մեքենագիր օրինակի միայն առաջին 70 էջերի վրա է հասցրել աշխատել Պ. Սևակը. կապույտ թանաքով կետադրել է, խմբագրել, ուղղել ինչ-ինչ բացթողումներ: Դրանցից հետո եկող էջերին հեղինակի գրիչը չի դիպել: Գրացիա Բաղդասարյանի

1 Ի դեպ, վաստակաշատ սևակագետ Ալբերտ Արիստակեսյանը իր «Պարույր Սևակ» (1974) մենագրության մեջ այս աշխատությունն անվանում է «**Սայաթ-Նովան և միջնադարյան տաղերգուները**» (էջեր 438, 439 և այլն): Սա սոսկական շփոթմունք է: Պ. Սևակն այդպիսի խորագրով անտիպ **հոդված** ունի, բայց ոչ **մեծածավալ ուսումնասիրություն**: 16 էջանոց այդ հոդվածը Սևակը սկսել է գրել 1971-ի հունվարին, մենագրությանը զուգահեռ:

հուշերից պարզ է դառնում, թե ինչու է այդպես ստացվել. «**Եղերական հունիսի տասնյոթի նախօրեին հազիվ էի հասցրել մեքենագրել քառորդը տակավին երկու հարյուր էջ եղած իր**» («Սայաթ-Նովան և հայ միջնադարը») ուսումնասիրության...»¹: Պարզ է, որ մնացած էջերը մեքենագրվել են Սևակի մահից հետո, այն էլ՝ հապճեպ, հույժ շտապողականությամբ: Նման եզրահանգման պատճառն այն է, որ մեքենագիր տեքստի այդ հատվածները լի են բազմաթիվ վրիպակներով, բացթողումներով, տարատեսակ բնույթի սխալներով (երբեմն պայմանավորված ձեռագրի թյուրընթերցմամբ), որոնք հանդիպում են մեքենագիր օրինակի գրեթե ամեն մի էջում, բայց չկան ձեռագիր օրինակում²:

Հաշվի առնելով ասվածը՝ տրամաբանական գտանք տպագրել աշխատության **ձեռագրային տարբերակը**՝ ավելորդ սխալներից և անձշտություններից խուսափելու համար:

Բայց պետք է ասել, որ ձեռագիր օրինակն էլ կարոտ էր որոշակի խմբագրման՝ հիմնականում տեխնիկական բնույթի (այսպես՝ երբեմն Պ. Սևակը շփոթում է ծանոթագրվող հեղինակների անունների թվացուցային կարգի տեղերը և այլն): Այդ տեսակ բոլոր թերությունները լիովին շտկվել են, անհրաժեշտության դեպքում՝ նաև ծանոթագրվել:

Ձեռագիրը դյուրընթեռնելի է և մաքուր. կարծես մեկը թելադրել է, Սևակը՝ գրել: Ձեռագրի ուշադիր զննությունը (էջերում պարբերաբար հայտնվող ժամանակային հաջորդական թվագրումները) թույլ է տալիս եզրակացնելու, որ այն **չի ունեցել իր նախնական սևագիր օրինակը**, այլ գրվել է հենց այդպես՝ մեկ շնչով: Այդքան մաքուր ու սահուն շարադրանք կարող էր

1 Պարույր Սևակը... հուշագիրների ափի մեջ, կազմողներ՝ Ն. Հովսեփյան, Ծ. Պետրոսյան, Երևան, 2006, էջ 241: Ընդգծումն իմն է – Ս. Ղ.:

2 Գ. Բաղդասարյանը՝ ուշիմ ու բանիմաց մտավորականը, այդքան անփույթ լինել չէր կարող: Երևի շտապել է մեքենագրել և ձեռագիր թերթերը վերադարձնել Սևակի ժառանգներին: Այլ բացատրություն չկա:

ստեղծվել միայն նյութն ամբողջովին մարսած լինելու դեպքում. ամեն ինչ կար Սևակի գլխում, մնում էր միայն թղթին հանձնել: Պատահական չէ, որ իր վերջին հարցազրույցում, Պ. Սևակն ասում է, թե «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատությունը *«հավանաբար մինչև տարեվերջ կավարտի»*¹... Ցավոք, վաղահաս մահը թույլ չտվեց այդ անել:

Երկու աշխատություններում էլ միջնադարյան հայ պատմագիրներից ու տաղերգուներից արված բազմաթիվ մեջբերումներ կան: Դրանք բոլորը մեկ առ մեկ ձշտվել են համապատասխան բնագրերի համեմատությամբ և, հարկ եղած դեպքում, շտկվել:

Սևակ Ղազարյան

1 «Սովետական արվեստ», Երևան, 1972, N 7, էջ 34:

ԿԱՐԾԵՑՅԱԼ
ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ
ԵՎ ՎԱՂ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԱՐՑԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՌԱՋԱԲԱՆ

1921 թվականին Էջմիածնի Գիտական ինստիտուտի հրատարակությամբ լույս է տեսնում «Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ» գիրքը նշանավոր բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միաբան) և Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով: Ինչպես երևում է գրքի «Առաջաբանից», 1917թ. «Վասպուրականի և Մշոյ դաշտի հայ ժողովրդի մեծ գաղթի ժամանակ այնտեղի վանքերից և եկեղեցիներից Էջմիածին բերած ձեռագրերի մէջ գտնուեց արտաքին տեսքով մի աննշան հատորիկ, պատմական խիստ հետաքրքիր և անծանօթ բովանդակութեամբ»¹: «Ձեռագիրը բերած է Լիմ անապատից և ամենայն հաւանականութեամբ արտագրած է նաև նոյն անապատում»², գրված է հին գործարանային թղթի վրա, «ջրանիջներով, տարբեր գրիչներից. նօտր շղագիր, անյիշատակարան, հաւանօրէն 17-րդ դարու գործ...»³: «Չկա որևէ յիշատակարան»: «Չունի... ոչ վերջ և ոչ էլ սկիզբ, ուստի անյայտ է մնում մեզ համար նաև գրքի սկզբնական անունն ու ծաւալը»⁴:

Գալուստ Տեր-Մկրտչյանը, մանրամասնորեն ուսումնասիրելով ձեռագիրը, մահվանից առաջ, ըստ Մեսրոպ եպիսկոպոսի հաղորդման, հայտնել է, որ ձեռագիրը «մինչև այժմ կորած **Շապուհ Բագրատունու պատմությունն է**. մինչդեռ իր արտագրության վերջին (էջ 61) կցված 2-ի համառոտ նկարագրութեան մէջ կոչում է «**Հացունեաց խաչի նորագիտ խմբագրութիւնը իր շարունակութեամբ**»⁵:

1 «Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ», հրատակութիւն Էջմիածնի Գիտական ինստիտուտի (Բնագիրներ եւ հետազօտութիւններ, Գիրք Ա), ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, 1921թ., «Առաջաբան», էջ 1:

2 Անդ, էջ XXX:

3 Անդ, էջ XXXIV: Ճիշտը՝ 18-րդ դար, տե՛ս անդ, էջ XXXII:

4 Անդ, էջ IX:

5 Անդ, էջ I:

Գալուստ Տեր-Սկրտչյանի մահից հետո ձեռագրի ուսումնասիրությամբ զբաղվում է Մեսրոպ Եպիսկոպոսը և մի ընդարձակ առաջաբանով հանդերձ հրատարակության է հանձնում իբրև Շապուի Բագրատունու նորագյուտ պատմությունը: «Էջմիածնի Գիտական Ինստիտուտը հրատարակում է այս արժեքավոր երկը Շապուի Բագրատունու անունով՝ համաձայն աշխատասիրողների առաջարկության՝ բանասիրությանը թողնելով հեղինակի անձի վերջնական պարզաբանությունը»:

Բանասիրությունն էլ, ընդառաջ գնալով ինստիտուտի ցանկությանը, իսկապես որ զբաղվում է «հեղինակի անձի վերջնական պարզաբանությամբ»: Իրար հետևից հայ տեղական և արտասահմանյան պարբերականներում լույս են տեսնում նորահրատ գրքի մասին գրախոսություններ, ուսումնասիրություններ, բոլորն էլ, առանց բացառության, նվիրված «հեղինակի անձի վերջնական պարզաբանությանը»:

Բոլոր այդ գրախոսություններն ու բանասիրական հետազոտությունները՝ քննում են նորահրատ գրքի և Շապուի Բագրատունի պատմիչի պատմության հարցը և առանց բացառության համակարծիք գտնվում մեկ հարցում. նորագյուտ ձեռագիրը չի կարող վերագրվել Շապուի Բագրատունուն: Մինչ, ժա-

1 Ն. Ակինյան, «Շապուի Բագրատունի եւ իր պատմութիւնը», «Մատենագրական հետազոտութիւններ», հատոր Ա, Վիեննա, 1922, էջ 167-225:

Հ. Աձառյան, «Հայերէն նոր բառեր Շապուի Բագրատունոյ պատմութեան մեջ», «Բազմավէպ», 1922, էջ 179-182, 232-235, 267-271:

Հ. Աձառյան, «Քննադատութիւն Շապուի Բագրատունոյ պատմութեան հրատարակութեան», «Զանգ», 1922, (արտատպված՝ «Արծազանք Փարիզի», 1922, N 22):

Գրախոսություն («Կարծեցեալ Շապուի»), «Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921-1922, էջ 244-254:

Ստ. Կանայան, «Պատմութիւն Աստուածընկալ ս. Նշանին և ս. Աղբերկու և Շապուի Բագրատունի», «Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921-1922, էջ 137-140:

Յ. Մարկվարտ, Լամակ, թվագրված 28 սեպտ., 1922 (տե՛ս Ն. Ակինյան, «Մատենագրական հետազոտութիւններ», հատոր Ա, Վիեննա, էջ 218):

մանակակից պատմիչների վկայությունների համաձայն, Շապուի Բագրատունին գրել է գերազանցապես Բագրատունիների պատմությունը, նորահրատ գիրքը պարունակում է գերազանցապես զրույցներ Արծրունիների մասին, - այս է բանասերների հիմնական պատճառաբանությունը, ըստ ամենայնի նաև ձի՛շտ պատճառաբանությունը, նորահրատ գիրքը Շապուիին չվերագրելու գործում:

Ապացուցված համարելով նորահրատ գրքի և Շապուի Բագրատունու ոչ նույնականությունը՝ բանասերները առաջինին (վերջինից տարբերելու համար) կոչում են՝ ոմանք «Սուտ Շապուի», ոմանք՝ «Կեղծ Շապուի», ուրիշները՝ «Անանուն զրուցագիր», կամ, մեր կարծիքով ամենից ավելի դիպուկ՝ «Կարծեցյալ Շապուի» հորջորջում, որ պահելու ենք առաջիկայում նաև մենք:

Բանասիրությունը, սակայն, պարզելով իր համար Կարծեցյալ Շապուիի և Շապուի Բագրատունու «Պատմություն»-ների ոչ նույնականությունը, հերքելով նորահրատ գրքի հրատարակիչների վարկածը, իր խնդիրը ավարտած է համարում, բոլորովին ձեռք չտալով կամ համարյա ձեռք չտալով գրքի բովանդակությանը, քննության չառնելով այն ըստ էության: Այստեղ ևս երևան է գալիս մեր տրադիցիոն բանասիրության օրգանական բացերից մեկը. բանասիրական մանրուքների փնտրտուքի հարուցած ոգևորության մեջ շատ հաճախ աչքաթող անել երկի, տվյալ գրական-պատմական հուշարձանի գնահատությունը ըստ բովանդակության, ըստ ոչ միայն պատմագրական (նեղ առումով), այլև ըստ պատմական-գրական արժանիքների:

Մինչդեռ ի դեմս Կարծեցյալ Շապուիի՝ մեզ հասած «Պատմության» մենք ունենք մեր միջնադարյան գրականության ամենահետաքրքրական և գնահատելի գրական-պատմական հուշարձաններից մեկը, թերևս չափազանց չի լինի ասել՝ մի եզակի հուշարձան, ուր, ինչպես կտեսնենք, իր արտահայտությունն

է գտել վաղ հայկական վերածնունդը: Այդ իմաստով նա մեզ համար այսօր կարող է ունենալ, միանգամայն հասկանալի պատճառով, խոշոր նշանակություն: Սակայն ոչ միայն այդ. Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը» ունի նաև պատմական նշանակություն, իհարկե ոչ այն իմաստով, ինչպես հասկացվել և գնահատվել է մեր բանասիրության կողմից մինչև այժմ, որը, այնտեղ չգտնելով ուղիղ համապատասխանություն, ավելի ձիշտ՝ համընկնում Թովմա Արծրունու, Հովհաննես կաթողիկոսի և այլոց հետ, չտեսնելով ժամանակագրություն, պատմական դեպքերի և դեմքերի կայուն հաջորդականություն, այն դիտել է իբրև պատմական ոչ մի նշանակություն չունեցող երկ: Դժբախտաբար, մեր բանասերներից ոմանց այս կարծիքը այնքան էլ չի տարբերվում մեր հին պատմիչների համոզմունքից, որոնց համար այլ բան էր «ըստ քերթողական հրահանգացն» գրված պատմությունը, որ փաստորեն նշանակում էր ռեալ կյանքի, կենդանի սոցիալ-տնտեսական, կենցաղային հարաբերությունների անտեսում, չոր ժամանակագրություն, և այլ բան էր «գեղջուկ բանի» գրված պատմությունը, որը (ինչպես ցույց են տալիս Փ. Բուզանդի, Հովհ. Մամիկոնյանի և Շապուհ Բագրատունու՝ մեզ չհասած պատմությունները) արհամարհանքի էր արժանանում հենց այն գծերի համար, որոնք անտեսվում էին «քերթողական հրահանգների» համաձայն, որոնք, սակայն, փոքրիշատե ներկայացնում էին կյանքի ռեալ այս ու այն կողմը:

Բանասիրությունը Իսկական և Կարծեցյալ Շապուհների հարաբերությունը, վերջինիս ժամանակաշրջանը ձշտելու և անձնավորությունը որոշելու հարցերից բացի, լավագույն դեպքում արձանագրել է, որ հեղինակը (Կարծեցյալ Շապուհը) «մեզ թողել է նշանավոր մի ժառանգություն, որ ոչ միայն ընծայում է հայոց լեզվի շատ ուսանելի մի նմուշ ու ընդլայնում է մեր պատմական ծանոթությունները, այլև արժանավոր տեղ է բռնում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան (Ս. Ղազարյան) 5

ԿԱՐԾԵՑՅԱԼ ԾԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՎ ՎԱՂ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԱՐՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առաջաբան 13

Ներածություն 19

ԳԼՈՒԽ Ա

*Ճշմարիտ և Կարծեցյալ Ճապուհների
հարաբերության հարցը* 52

ԳԼՈՒԽ Բ

Կարծեցյալ Ճապուհի ժամանակը 75

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԸ

Մուտք 151

ԳԼՈՒԽ Ա

Սերը և իր առաջնությունը 154

ԳԼՈՒԽ Բ

Հոգու և մարմնի ներհակությունը 191

ԳԼՈՒԽ Գ

Սերը և իր արտահայտությունները 385

Վերջաբան (Ս. Ղազարյան) 389

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
ԱՆՏԻՊ
ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПАРУЙР СЕВАК
НЕОПУБЛИКОВАННЫЕ
НАУЧНЫЕ ТРУДЫ

PARUYR SEVAK
UNPUBLISHED WORKS

*Կազմող, ծանոթագրող և խմբագիր՝ Սևակ Ղազարյան
Հրատարակչական խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Էջադրումը՝ Արմինե Քոչարյանի
Ձևավորումը՝ Արամ Ուոուտյանի*

Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.3 ծավալային կշիռով
Ծավալը՝ 25.0 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran
Տպաքանակը՝ 400
Տպագրվել է «ԵԳԵԱ» ՄՊԸ տպագրատանը
Հասցե՝ ք. Երևան, Հ. Հակոբյան 3
Գինը՝ պայմանագրային



Ք. Երևան, Ծիրազի 24, 48 բն.
հեռ.՝ (+374) 10-34-73-35
Էլ. փոստ՝ armav-hrat@mail.ru